ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

Նարինե Ասրյան

Բանալի բառեր՝ վերաբաշխիչ քաղաքականություն, բարեկեցության քաղաքականություն, աղքատություն, անհավասարություն, զբաղվածություն, սոցիալական քաղաքականություն, հանրային բարիք, ակտիվների բաշխում, այլընտրանքային վերաբաշխում:

Հանրային ոլորտի տեսաբանները և հանրային ոլորտի բարեփոխումների ռազմավարություններ մշակողները երկար ժամանակ քննարկում էին այն հարցը, թե ինչպիսին պետք է լինեն բարեկեցության պետության հայեցակարգային հիմքերը, որի ներսում պետք է իրականացվի աղքատության և սոցիալ-տնտեսական անհավասարության նվազեցմանն ուղղված համապատասխան քաղաքական կուրս: Այս առումով հարկ է առանձնացնել երկու տարբեր խնդիրներ [1].

– նախ, անհրաժեշտ է հստակեցնել, թե արդյոք բարեկեցության պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականությունը պետք է ունենա գլոբալ, համընդհանուր, թե՞ թիրախային բնույթ, այսինքն, արդյո՞ք այն պետք է կազմակերպվի միայն աղքատների համար, թե՞ բարեկեցության սոցիալական պետության կոնցեպտը պետք է ներառի բոլոր քաղաքացիներին:

– երկրորդ հարցը վերաբերում է սոցիալական ապահովագրության միջոցով տրամադրվելիք նպաստների մակարդակին, այսինքն, արդյո՞ք նպաստները պետք է տրամադրվեն էգալիտար, համահավասարության սկզբունքից ելնելով, թե՞ պետք է հաշվի առնել հասարակության այս կամ այն խմբի բարեկեցության մակարդակը: Այս պարադոքսալ հարցերն առանցքային նշանակություն ունեն այն հարցի պատասխանի համար, թե արդյո՞ք «միջին խավը» առհասարակ տեղ ունի բարեկեցության պետության մեջ [2]:

Ավելի ուշ ոլորտի տեսաբանները, միջազգային գործակալությունները, փոխօգնության ֆոնդերը և այլ կառույցներ, ինչպես նաև առանձին պետությունների կառավարություններ, այս հարցին ի պատասխան, եկել են այն եզրահանգման, որ անհրաժեշտ է ներդնել և գործարկել վերաբաշխիչ քաղաքականության իրականացման ռազմավարություններ: Սակայն անհրաժեշտ է հիշել, որ ամեն անգամ, երբ պետությունների կառավարությունները ձեռնարկում և իրագործում են որևէ քաղաքական կուրս՝ անկախ դրա բնույթից և իրագործման ոլորտից, միշտ ձևավորվում են «հաղթողներ և պարտվողներ»: Ավելին, լայն իմաստով, ըստ Թուլոքի, «կառավարության ցանկացած քաղաքական կուրս կարելի է որակել որպես վերաբաշխիչ» [3]: Սակայն սույն հոդվածի շրջանակներում մեր ուշադրության կենտրոնում է լինելու պետության սոցիալական՝ ավելի կոնկրետ՝ բարեկեցության քաղաքականությունը (welfare policy), որի շրջանակներում վերաբաշխման շարժառիթը շատ ավելի բացահայտ և ակներև է:

---

* Հոդվածն ընդունվել է 22.09.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանը: 28.09.21:

Նեղ իմաստով, պետության բարեկեցության քաղաքականությունը կարելի է սահմանել որպես ռեսուրսների վերաբաշխում՝ հարուստներից դեպի աղքատները: Սակայն լայն իմաստով հանրային քաղաքականության այս ուղղությունն ընդգրկում է նաև հարկման և այլ օժանդակ մեխանիզմներ, այդ թվում՝ նաև «իրավական բարեկեցությունը» (legal welfare), օրինակ, նվազագույն վարձատրության մասին օրենսդրությունը, ինչն այս համատեքստում կարող է կարևոր նշանակություն ունենալ:

Սակայն դրա հետ մեկտեղ, գիտական-ակադեմիական շրջանակներում և պրակտիկ հետազոտողների շրջանում շատ քիչ է խոսվել այն մասին, թե, ի վերջո, որն է վերաբաշխիչ լավագույն քաղաքականությունը, որը կհանգեցնի վերաբաշխման լավագույն ռազմավարության ընդունման: Այսպես, օրինակ՝ բարեկեցության քաղաքականության արդյունավետությունը գնահատելիս կարևոր է հասկանալ, թե «ով է հաղթում և ով՝ պարտվում», այսինքն՝ ելնել այն արդյունքներից, թե ինչպես են այդ քաղաքականության մեխանիզմներն ազդում աղքատության և անհավասարության ցուցանիշների վրա:

Մյուս կողմից՝ բարեկեցության քաղաքականության կուրս մշակելիս պետությունների կառավարությունները հայտնվում են երկընտրանքի առջև՝ արդյո՞ք անհրաժեշտ է ցուցաբերել արմատական մոտեցում և իրականացնել կառուցվածքային փոփոխություններ, թե՞ ճիշտ կլինի, առաջին հերթին կենտրոնանալ առանձին պետությունների և տարածաշրջանների՝ այս բնագավառում արձանագրած փորձի վերհանման և ուսումնասիրության վրա [4]:

Բարեկեցության քաղաքականության մի շարք մեխանիզմների շրջանակներում բնակչությանն առաջարկվում է ապահովագրություն ոչ բարենպաստ ռիսկերից, օրինակ՝ առողջական վիճակի վատթարացումից և գործազրկությունից՝ ապահովելով համահարթ և համաչափ եկամուտներ ողջ կյանքի ընթացքքում. սա այն է, ինչ Բարրին [5] անվանում էր «խնայատուփի գործառույթ» («Piggy Bank» function) [6], որն, ի տարբերություն «Ռոբին Հուդի գործառույթի» «Robin Hood» function [7]), գրականության մեջ պակաս ուշադրության է արժանացել: Ավելին, Բարրին պնդում էր, որ չնայած հիմք չկա կարծելու, որ համընդհանուր բարեկեցության պետության կոնցեպտի գործարկումը հետապնդում է միայն մեկ նպատակ, այնուամենայնիվ, եթե անգամ դա այդպես է, ապա պետք է նկատի ունենալ, որ դա եկամուտների որոշակի մակարդակի ապահովումն է, այլ ոչ թե աղքատության կրճատումը: Ավելին, աղքատության մասշտաբների կրճատումը «լավ կազմակերպված պետության» կողմնակի արդյունք է, անգամ եթե դա համակարգը կազմող առանձին քաղաքականությունների հիմնական նպատակը չէ: Այսպիսով, հարուստներից աղքատներին ռեսուրսների վերաբաշխումը պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքական կուրսի և սոցիալական ապահովության սխեմաների երկրորդային նպատակն է, որը, որպես վերջնարդյունք, պետք է հանգեցնի աղքատության մակարդակի նվազման: Այս իմաստով հաճախ կարևոր է գնահատել նման քաղաքականությունը՝ վերաբաշխման վրա դրա ունեցած ազդեցության տեսանկյունից:

Իրենց հերթին, մակրոտնտեսական մոդելները, որոնք նախատեսված են, օրինակ, աղքատության կամ գործազրկության վրա եկամուտների վերաբաշխման ազդեցությունը գնահատելու համար, սովորաբար հաշվի չեն առնում, թե ինչ այլընտրանքային ուղիներով կարելի է իրականացնել եկամուտների վերաբաշխում: Ամեն դեպքում, եկամուտների վերաբաշխման այլընտրանքային ձևերը պետք է նշանակալի ազդեցություն ունենան վերաբաշխման վերջնարդյունքների վրա՝ սկսած եկամտի կամ կապիտալի բաշխումից մինչև անուղղակի հարկումը: Նույն ձևով բոլոր նրանք, ովքեր պաշտպանում են հիմնային պահանջմունքների առաջնայնության ռազմավարությունը, հազվադեպ են մտածում այն մասին, թե իրականում ինչպես պետք է իրագործվի վերաբաշխիչ քաղաքականությունը:

Այնուամենայնիվ, ուղին կամ եղանակը, որով իրականացվում է վերաբաշխումը, հավանաբար, առանցքային ազդեցություն կունենա հասարակության էգալիտար, հավասարության վրա հիմնված զարգացման վրա: Նախ՝ օրինակ՝ զարգացող երկրներում առկա աղքատության գոյություն ունեցող պատկերի և ցուցանիշների պարագայում բնակչության գնողունակության բարձրացման այլընտրանքային ուղիները և գործիքները կունենան տարբեր էֆեկտներ՝ բնակչության մեկ խմբի հաշվին բարձրացնելով մեկ այլ հատվածի բարեկեցությունը: Ավելին, աղքատների գնողունակության մակարդակի բարձրացումն այլընտրանքային վերաբաշխման, իսկ ավելի կոնկրետ՝ պահանջարկի պայմանի տարրերից մեկն է միայն. անհրաժեշտ է հաշվի առնել ևս երկու նախադրյալ. Նախ՝ սպառման հիմնական, նվազագույն ծավալները բավարարելու համար անհրաժեշտ է արտադրված ապրանքների և ծառայությունների լրացում ներկրվող պաշարներով. սա է արդյունավետ մատակարարման հիմնական կանոններից մեկը: Մյուս կողմից՝ կարելի է հակադարձել, որ թույլ զարգացած երկրների մի մասում այս պայմանն արդեն չեզոքացվել է, և մեկ շնչին բաժին ընկնող սննդամթերքի ծավալն ավելի քան բավարար է բնակչության նորմալ կենսագործունեության ապահովման համար [8]:

Երկրորդ. գոյություն ունեցող պաշարները պետք է իրապես հասանելի լինեն բնակչության աղքատ հատվածին. սա ժամանակի ընթացքում բավարարվող մատակարարում է, որի համաձայն՝ մատակարարումը պետք է լինի անընդհատ, իսկ պահանջարկն՝ արդյունավետ: Իր հերթին, վերաբաշխիչ արդյունավետ ռազմավարությունը պետք է լինի կայուն: Վերաբաշխիչ քաղաքականության այլընտրանքային գործիքները տարբեր կերպ են ազդելու ինչպես պահանջարկի, այնպես էլ առաջարկի վիճակի, մատակարարման պայմանների և կայունության վրա: Քննարկենք դրանք ստորև [9].

*1. **Գների վերահսկման քաղաքականություն:** Այս գործիքը «երկսայր սուր է», քանի որ կարող է վնասել բնակչության մի խմբին և օգնել՝ մյուսին: Օրինակ սննդամթերքի գների նվազեցման քաղաքականությունը կարող է շահեկան լինել նրանց համար, ովքեր սննդի մատակարարման առումով ապավինում են շուկային և վնաս հասցնում այն աղքատ գյուղացիներին, ովքեր ապրուստ են վաստակում՝ շուկայում վաճառվող սնունդ արտադրելով: Իր հերթին, սննդամթերքի գների բարձրացման քաղաքականությունը կարող է ենթադրաբար շահեկան լինել նույն թվաքանակով աղքատ մարդկանց, պարզապես շահառուների դասակարգային կազմը երկու դեպքում շատ տարբեր կլինի. ավելին՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ աղքատների կողմից ձեռնարկվող արտադրման և սպառման որոշ գործողություններ տեղի են ունենում շուկայից դուրս, հետևաբար, աղքատների կողմից արտադրվող և սպառվող ապրանքների գների վրա ազդեցության գործող քաղաքականությունը սահմանափակվելու է աղքատության մեջ գտնվող բնակչության այն հատվածի աղքատությամբ, որոնց գործունեությունը սերտորեն կապված է շուկաների հետ:*

Գների վերահսկման քաղաքականության հետ կապված մյուս բարդությունն այն է, որ վերջինս, հավանական է, վերաբաշխման ռազմավարության հաջող իրականացման պայմանների վրա կունենա սահմանափակ, հնարավոր է՝ նաև բացասական ազդեցություն: Օրինակ առաջարկի ցածր ճկունության հետևանքով սննդամթերքի վրա ձևավորվող բարձր գները կարող են աննշան ազդեցություն ունենալ առաջարկի վրա՝ համենայն դեպս՝ կարճաժամկետ հեռանկարում: Իր հերթին, արտադրության և գների մակարդակի աճի հետևանքով ձևավորված ավելի բարձր եկամուտների աշխարհագրական բաշխվածությունն անհամաչափ կլինի ինչպես տարածաշրջանների միջև, այնպես էլ ներտարածաշրջանային մակարդակով՝ մոնետիզացման և կոմերցիոնալիցացիայի տարբեր տեմպերի հետևանքով:

Այն փաստը, որ ավելի առևտրայնացված շրջաններում, ընդհանուր առմամբ, սպասվում է առաջարկի ավելի մեծ արձագանք, ենթադրում է, որ նույնիսկ գնային քաղաքականությունը, որը հաջող կերպով մեծացնում է համախառն առաջարկի աճը, նույնպես հավանական չէ: Այսինքն դա կարող է միայն աննշան ազդեցություն ունենալ մատակարարման պայմանների վրա: Իր հերթին, եթե սննդամթերքի գները սահմանվում են ցածր մակարդակի վրա, դա կարող է խախտել առաջարկի և մատակարարման պայմանների կապը: Այսինքն՝ եթե աղքատների համար հոգածության դեպքում արտադրանքի գինը ցածր է պահվում, ապա ավելի քիչ սնունդ կարող է հասանելի լինել: Աղքատներն, ի վերջո, «տառապում են», քանի որ քիչ սնունդ է վաճառվում վերահսկվող գներով, մինչդեռ «սև շուկայում» դրանք վաճառվում են բարձր գներով:

*2. **Անուղղակի հարկման և սուբսիդավորման քաղաքականություն:** Գների վերահսկման խնդիրներից մեկը, իհարկե, նրանց «զրոյական» որակն է,որն արտադրողներն ու սպառողները կարող են շահել միայն միմյանց հաշվին: Այնուամենայնիվ, անուղղակի հարկերն ու սուբսիդիաները կարող են նվազեցնել այս խնդիրը՝ ստացված գնի միջև «սեպ խրելով»: Որպես աղքատներին օգնելու միջոց, այնուամենայնիվ, արտադրող և սպառող սուբսիդները սովորաբար շատ բութ գործիք են: Օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտում գների աջակցության սխեմաները, չնայած դրանք կարող են հանգեցնել արտադրանքի ծավալների ավելացման, առավելապես շահեկան են հարուստ հողատերերի և աննշան օգտավետ՝ փոքր ֆերմերների համար: Ընդ որում, շատ են դեպքերը, երբ ցածր եկամտաբերությամբ սպառողները տուժել են գնագոյացման գործարկվող սխեմաների արդյունքում:*

Ապրանքների ձեռքբերման գծով սպառողներին տրամադրվող սուբսիդավորման առավելությունները սահմանափակվում են միայն այն անձանց շրջանակով, ովքեր գնումներ են կատարում շուկաներում: Սուբսիդիաներն ինքնին ոչնչով չեն նպաստում վաճառվող ապրանքների մատակարարման բարելավմանը, և հաճախ մատակարարման խնդիրը կարող է լինել նույնքան կարևոր, որքան գինը: Գործնականում կառավարությունները հաճախ համատեղում են սննդամթերքի սուբսիդիաներն մատակարարման ուղղակի սխեմաների հետ:

*3. **Նվազագույն աշխատավարձի քաղաքականություն:** Լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման և նվազագույն աշխատավարձի բարձրացման քաղաքականությունն ուղղված է աղքատների տարբեր կատեգորիաներին: Զբաղվածության բարձրացման հնարավորությունները հիմնականում ձեռնտու են մասնակի կամ ամբողջությամբ աշխատանքից զուրկ, սակայն աշխատունակ անձանց, մինչդեռ նվազագույն աշխատավարձի քաղաքականությունը կիրառելի է հիմնականում կազմակերպված աշխատանքի շուկայում կանոնավոր զբաղվածության դեպքում: Թույլ զարգացած շատ երկրներում աշխատանքի ֆորմալ շուկաներում բնակչության ներգրավվածության թվերը բավականին փոքր են:*

Ինչպես ապրանքների գների փոփոխման քաղաքականության դեպքում, այնպես էլ նվազագույն աշխատավարձի քաղաքականությունը ևս «երկսայր սուր է», որը կարող է և՛ վնասել, և՛ օգնել աղքատներին: Այսպես՝ քննարկվող քաղաքականությունն ուժի մեջ մտնելուն պես, այն շահեկան է դառնում նախկինում նվազագույնից ցածր աշխատավարձ ստացողների համար: Մյուս կողմից՝ քանի որ քաղաքական այս կուրսը խոչընդոտում է աշխատանքային ինտենսիվ գործունեությունը, այն նաև վնաս է հասցնում գործազուրկներին և բոլոր նրանց, ովքեր կաշխատեին, եթե աշխատանքի արժեքն ավելի ցածր լիներ: Բացի այդ, նվազագույն աշխատավարձի քաղաքականությունը վնասում է փոքր գործատուներին, ովքեր ապրանքների և ծառայությունների արտադրության իրենց աշխատանքի մեջ ապավինում են վարձու աշխատանքին:

*4. **Զբաղվածության ցուցանիշների բարելավման քաղաքականություն:** Կարճաժամկետ հեռանկարում զբաղվածության զանգվածային հնարավորություններ ստեղծելու*

համար մշակված և իրականացվող քաղաքականությունն անպայման պետք է հիմնված լինի հասարակական աշխատանքների ծրագրերի վրա: Վերջիններիս ազդեցությունը կտարբերվի՝ կախված կիրառվող սխեմայի տեսակից և բնույթից. այսպես՝ օրինակ՝ սխեմաները, որոնք պարզապես «լավ պատրաստված» են, սակայն ունեն կարճաժամկետ և անցողիկ բնույթ, կարող են մի փոքր ավելին անել, քան, օրինակ՝ վառելիքի գնածը՝ եկամուտների ստեղծման գործընթացի և հիմնական կարիքների բավարարման նպատակով ապրանքների մատակարարման համար:

5. **Հանրային բարիքների տրամադրման քաղաքականություն:** Այնպիսի հանրային բարիքների տրամադրումը, ինչպիսիք են՝ առողջությունը, կրթությունը և այլն, հաճախ հասանելի չէ զարգացող երկրների ամենաաղքատ խմբերին. սա նշանակում է, որ այնպես, ինչպես եկամուտների վերաբաշխումից, այնպես էլ հանրային ծառայություններից ստացվող օգուտները մեծամասամբ ուղղվում են բնակչության առավել ապահով խմբերին: Ինչպես և քննարկված նախորդ դեպքերում, այս դեպքում ևս, աղքատ խավի մոտ քաղաքական ուժի բացակայությունը նրանց ստացած նպաստների ցածր մասնաբաժնի բացատրության մի մասն է:

Ի լրումն, այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ հաճախ տեխնիկապես դժվար է աշխարհագրորեն ցրված ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին հանրային ծառայություններ մատուցելը: Ավելին, նույնիսկ այն դեպքում, երբ նման ծառայությունները սկզբունքորեն կարող են հասանելի լինել, միշտ չէ, որ աղքատները կարող են օգտվել դրանցից, քանի որ չունեն անհրաժեշտ միջոցներ ուղևորության, դպրոցական վարձերի և այլնի համար: Այլ կերպ ասած, այս դեպքում ավելին է պահանջվում, քան պարզապես հանրային ծառայությունների մատակարարման ավելացումը: Ավելի մեծ քանակության բուժհաստատությունների, դպրոցների կամ սոցիալական օժանդակության ծրագրերի առկայությունն ինքնին օգուտ չի բերում աղքատներին. առնվազն անհրաժեշտ է հավասարապես ուշադրություն դարձնել նրանց, ովքեր դրա կարիքն ունեն՝ այնպես, ինչպես որոշելն է, թե ինչ է անհրաժեշտ իրենց: Մյուս կողմից՝ աղքատներին հանրային ծառայությունների մատուցման արդյունավետությունը կախված է թե՛ դրանց բնույթից, թե՛ այդ ծառայությունների ճիշտ համակցումից:

6. **Արտադրողականության բարձրացմանն ուղղված քաղաքականություն:** Այսպես, օրինակ՝ փոքր ֆերմերների և արհեստավորների արտադրողականությունը բարձրացնելուն ուղղված միջոցառումներից կշահեն նրանք, ովքեր ունեն արտադրական ակտիվներ: Բացի այդ, կախված վարձատրության համակարգից՝ այդ միջոցառումները կարող են շահեկան լինել այն աշխատողների համար, որոնց արտադրողականությունը բարձրացել է: Վերաբաշխման ռազմավարության մեջ նման միջոցների ընդհանուր ներդրումը կարող է ավելի մեծ լինել, քան, օրինակ՝ զբաղվածության և գնային քաղաքականության դեպքում, հատկապես եթե ռազմավարության իրականացումը ներառում է եկամտի և հարստության համեմատաբար հավասար բաշխման միջոցառումներ:

7. **Ակտիվների բաշխման քաղաքականություն:** Ավելի ու ավելի ընդունելի է դառնում այն փաստը, որ ակտիվների լայնածավալ փոխանցումները էական նշանակություն կունենան, եթե դրանցում աղքատների մասնաբաժինն արագ կերպով և զգալիորեն ավելանա: Ակտիվների բաշխումն, անկասկած, եկամտի բաշխման և եկամուտների ձևավորման գործընթացի առաջնային որոշիչն է: Սակայն՝ ո՛չ առաջինը, ո՛չ էլ երկրորդը չեն կարող հիմնովին փոփոխվել առանց սեփականության իրավունքի և արտադրական հարստության նկատմամբ վերահսկողական լծակների փոփոխության: Անշուշտ, գոյություն ունեն ակտիվների բաշխման բազմաթիվ ձևեր և եղանակներ, և բնակչության աղքատ խմբերի վրա վերջիններիս ազդեցությունը կախված կլինի նրանից, թե ինչ ակտիվների մասին է խոսքը՝ և ինչպես է տեղի ունենում բաշխումը:

Այսպես՝ օրինակ՝ գործնականում ազգայնացումը սահմանափակվում է քաղաքային կոմունալ ծառայություններով, արտադրական ձեռնարկություններով, ինչպես նաև՝ հանքարդյունաբերական ոլորտով: Բացի տնկարկներից, աղքատ երկրներում գյուղատնտեսական նշանակության հողատարածքները հազվադեպ են ազգայնացվել. դրա փոխարեն ներդրվել են հողերի վերաբաշխման բազմաթիվ եղանակներ՝ ինչպես անհատական, այնպես էլ՝ կոլեկտիվիստական հիմունքներով: Իսկապես, քանի որ աղքատ երկրների մեծ մասում հողը գերակա ակտիվ է, ակնհայտ է, որ աղքատների ունեցվածքի պաշարների էական աճ չի գրանցվում, այսինքն՝ այլընտրանքային վերաբաշխման այս ձևը չի հանգեցնում աղքատների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման [10]:

Այսպիսով՝ սույն հոդվածի շրջանակներում առանձին-առանձին դիտարկեցինք եկամուտների և հարստության վերաբաշխման յուրաքանչյուր այլընտրանքային գործիք և քննարկեցինք դրանցից յուրաքանչյուրի սահմանափակումները: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ թույլ զարգացած երկրներում աղքատության խնդրի բնույթն այնպիսին է, որ այն հնարավոր չէ վերացնել կամ մեղմել քաղաքականության միայն մեկ՝ մեկուսի կիրառվող գործիքի միջոցով: Այս պնդումը ճիշտ է՝ անկախ այն մասշտաբից, որի վրա այն կիրառվում է: Իսկապես, աղքատության մակարդակի մեղմանն ուղղված որոշ գործիքներ իրականում վնաս են հասցնում աղքատության մեջ գտնվող որոշակի խմբերին՝ շահեկան դառնալով մյուսների համար: Երկրորդ՝ իրականացվող քաղաքականության յուրաքանչյուր գործիք աղքատության ցուցանիշների վրա կազդի տարբեր կերպ և եղանակներով՝ ընդգրկելով նաև այն բոլոր մյուս պայմանները, որոնք նույնպես պետք է բավարարվեն, եթե հաջողվի վերաբաշխման ռազմավարությունը, այն է՝ մատակարարման, տրամադրման և կայունության:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Titmuss R. M.,** Problems of Social Policy (HMSO and Longmans, Green, 1950) p.508.
2. **Korpi W., Palme J.,** The Paradox of Redistribution and Strategies of Equality: Welfare State Institutions, Inequality and Poverty in the Western Countries, Working Paper No. 174, February 1998, p.4
3. **Randall G. Holcombe,** Gordon Tullock on Inequality and Redistribution, The Independent Review, https://www.jstor.org/stable/26591781, Vol. 23, No. 2 (Fall 2018), pp. 227-247
4. **Griffin K., James J.,** The Transition to Egalitarian Development, 1981, ISBN 978-1-349-05916-4 ISBN 978-1-349-05914-0 (eBook), DOI 10.1007/978-1-349-05914-0, p.10
5. **Barry B.,** “International Society from a Cosmopolitan Perspective,” in Mapel, David R. and Nardin, Terry, eds, International Society, Princeton: Princeton University Press,1998.
6. **Խնայատուփի էֆեկտ՝** ենթադրում է պետության ներսում որոշակի մեխանիզմների և ինստիտուտների առկայություն, որոնց միջոցով այն ապահովագրում է իր քաղաքացիներին և ապահովում համահարթ եկամուտներ ողջ կյանքի ընթացքում:
7. **Ռոբին Հուդի էֆեկտ՝** տնտեսական երևույթ, պայմանավորված հարուստներից աղքատներին եկամուտների վերաբաշխման հետ: Այն կարող է պայմանավորված լինել տարբեր ռազմավարություններով և տնտեսական որոշումներով, որոնց մեծ մասը, սակայն, ուղղված է դեպի աղքատության կրճատում:
8. **Baruch B., “**Redistribution without Egalitarianism,” Social Philosophy and Policy, 1(1), 1983, pp.71–87

9. **Griffin K., James J.,** The Transition to Egalitarian Development, 1981, ISBN 978-1-349-05916-4 ISBN 978-1-349-05914-0 (eBook), DOI 10.1007/978-1-349-05914-0, pp.24-39
10. **Sen A.,** 'Starvation and Exchange Entitlements: A General Approach and its Application to the Great Bengal Famine', *Cambridge Journal of Economics,* vol. 1(1) (March 1977) p. 43.

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Եկամուտների վերաբաշխման այլընտրանքային ձևերն ու եղանակները և բարեկեցության քաղաքականությունը
Նարինե Ասրյան

Խորացող հասարակական-քաղաքական զարգացումների պայմաններում հետզհետե ավելի մեծ ուշադրության է արժանանում եկամուտների վերաբաշխման հիմնահարցը՝ նպատակ ունենալով չեզոքացնել ծայրահեղ աղքատության՝ աշխարհում գոյություն ունեցող և աստիճանաբար ուժգնացող միտումները: Այս համատեքստում մեծ կարևորություն է ստանում վերաբաշխման այլընտրանքային ձևերի և եղանակների՝ որպես վերաբաշխիչ քաղաքականության իրականացման նոր գործիքաշարի, որոնումը և գործարկումը:

Սույն հոդվածի շրջանակներում քննարկվում են վերաբաշխիչ քաղաքականության իրագործման այն այլընտանքային ուղիները և եղանակները, որոնք նպատակ են հետապնդում բարեկեցության քաղաքականության և սոցիալական պետության կոնցեպտի շրջանակներում ձևավորելու էգալիտար, համահավասարության սկզբունքներով գործառնող հասարակություն և պետություն:

РЕЗЮМЕ
Альтернативные формы и способы перераспределения доходов и политика благосостояния
Нарине Асрян

Ключевые слова: политика перераспределения, политика благосостояния, бедность, неравенство, занятость, социальная политика, общественное благо, перераспределение активов, альтернативное перераспределение.

В контексте углубляющегося социально-политического развития проблема перераспределения доходов становится все более важной с целью противодействия постоянно усиливающимся тенденциям крайней нищеты в мире. В этом контексте поиск и внедрение альтернативных способов перераспределения как нового инструмента для реализации политики перераспределения имеет большое значение.

В данной статье обсуждаются альтернативные формы реализации политики перераспределения и способы, направленные на развитие эгалитарного общества и государства в рамках концепции политики благосостояния.

SUMMARY

Alternative Ways and Forms of Income Redistribution and Welfare Policy

Narine Asryan

Keywords: redistributive policy, welfare policy, poverty, inequality, employment, social policy, public good, asset distribution, alternative redistribution**.**

In the context of deepening socio-political developments, the issue of income redistribution is becoming more and more important, with the aim of counteracting the ever-increasing tendencies of extreme poverty in the world. In this context, the search for and implementation of alternative ways of redistribution as a new tool for implementing redistributive policies is of great importance.

This article discusses the alternative ways of implementing redistributive policy, the ways that aim to develop an egalitarian society within the welfare state concept.